ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Կ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

1

Երկրորդ համաշխարհային պատերազմը հայրենական պատերազմ էր ինչպես ռուս, ԽՍՀՄ կազմում ընդգրկված մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի համար։ Այն մղվում էր հայրենի հողի ու արդարության համար։

Դեռ պատերազմը Խորհրդային Միության սահմաններին չհասած, դեռ այն ժամանակ, երբ Մոսկվայում բարեկամության ճառեր էին ասվում հիտլերյան Գերմանիայի հանդեպ, Արշակ Չոպանյանը գրում էր իր «Անահիտում». «Պատերազմին, որ միշտ աղետ մը եղած է, բայց որ ատենով գեթ քաջ-քաջին դեմ ասպետական կռվի բնույթ մը ուներ, ուր անպաշտպան քաղաքներու անզեն մարդիկ, կիներ, երեխաներ, ծերեր անվնաս կը մնային, անոնք տվին ճիվաղային ու վատոգի վայրագության ձևեր, որոնք մարդը ետ կտանին մինչև նախապատմական մարդ-գաղանը, բարերար գիտությունը դարձուցին քանդումի, մահվան, արհավիրքի գործիք (քաղաքներու խաղաղ անզեն բնակչության վրա հարձակում հրձիգ կամ պայթուցիկ ռումբերով, թունավոր գազերով, ախտասփյուռ միկրոբներու տարափով և այլն)։ Ու մենք հայերս չենք կրնար մոռնալ, որ եթե ունեցանք Լեփսիուսի պես գերման ազնիվ հայրենասեր, գերման ուղեղներն են, որ թելադրեցին 1915-ի քստմնելի տեղահանությունները...»[1]։ 1915 թ. և թուրք-գերմանական համագործակցությունը դեռ շատ թարմ էին ժողովրդի հիշողության մեջ, թեև պաշտոնական պրոպագանդան ԽՍՀՄ-ում ձգտում էր եղեռնը մոռացնել տալ։

Եվ մի վկայություն Դեմիրճյանի օրագրից, պատերազմական ժամանակի համար սովորական, առօրեական մի գրառում, կատարված արդեն պատերազմի ընթացքում. «Ղրիմում սկսվել են վճռական կռիվները։ Քաղաքում զանազան լուրեր տաճկական հարձակման մասին։ Ջուտ հայկական ձևակերպում։ Ինչո՞ւ հարձակման։ Ինչո՞ւ մենք չենք լինի նախահարձակը։ Լուրերի մեծ մասն էլ հայոց պատմության հետևանք է։ Ժողովուրդն ստեղծում է ոչ պրովոկացիոն մտքով, նրա մեջ խոսում է պատմական ռեցիդիվների ահը»[2]։ Դժվար չէ գալ, որ Դեմիրճյանը նույնիսկ դժգոհ է այդ լուրերի տարածումից։ Բայց՝ «հայոց պատմության հետևանք է»։ Եվ բնական է, որ և՛ Խորհրդային Միությունում, և՛ Սփյուռքում հայերն անմիջապես պատերազմն ընկալեցին առաջին հերթին այդ՝ թուրք-գերմանական դաշինքի և հայոց դեմ կախված անմիջական սպառնալիքի տեսանկյունից։ Հայության համար այս էր ամենաէականը, ամենագլխավորը։ Եվ այստեղից էլ բխում էր ռուս ժողովրդի և Խորհրդային Միության մյուս ժողովուրդների հետ զինակցության անհրաժեշտությունը։ Պատմական փորձը մղում էր դեպի այդ զինակցությունը։

---

1 «Անահիտ», 1939, № 6, էջ 18։

2 Դերենիկ Դեմիրճյան. Երկերի ժողովածու. հ. XIV, Երևան, 1987, էջ 24։

Պատերազմի տարիների Իսահակյանի հրապարակախոսությունը առհասարակ նրա ստեղծագործական կենսագրության հետաքրքրական էջերից մեկն է։ Բայց բանաստեղծի հատկապես մի հոդվածը այսօր արժանի է մեր առանձնահատուկ ուշադրությանը։ Հոդվածը հենց այդպես էլ կոչվում է՝ «Հայրենական պատերազմը և հայ ժողովուրդը» և գրված է պատերազմի սկզբի տարելիցի առթիվ։ Գրված է ներշնչումով, իրեն հատուկ շքեղ և պաթետիկ ոճով։ Իսահակյանը թռուցիկ քննում է մեր ամբողջ պատմությունը իբրև մաքառման անվերջ ընթացք և հպարտությամբ արձանագրում է. «Հայ ժողովուրդը՝ ճակատագրի բերմամբ կանգնած լինելով արևելյան և արևմտյան աշխարհակալ հզոր պետությունների հանգուցային ճանապարհի վրա, գոյության անտեղիտալի կռիվ է մղել և զարհուրելի բախումների մեջ կոտորակվելով, այնուամենայնիվ մնացել է միշտ կանգնած իր նվիրական հողերի վրա, և միշտ ոգով աննվաճ, ազատատենչ և լուսաբաղձ»[3]։ Բայց այս հոդվածի մեջ, անկասկած, կենտրոնական մոտիվներից մեկը հայկական ջարդերում թուրք-գերմանական դաշինքի թեման է, որն ինքնին շատ բան էր ասելու ռազմաճակատում կռվող հայ զինվորներին. «Երբ Հայաստանի գյուղերն ու քաղաքները թաթախվեցին հայկական արյան մեջ, այլասերված Վիլհելմ II կայզերը ցինիկաբար հայտարարեց, որ հայերից պիտի թողնել միմիայն մի մարդ՝ իբրև էթնոգրաֆիկ մուզեի օբյեկտ, և ուխտի գնաց նույն սուլթանի մոտ՝ խրախուսելով հայկական ջարդերը։ Իսկ առաջին իմպերիալիստական պատերազմին նույն կայզերը իր բորենիներով՝ Իմհոֆ, Սանդերս, ֆոն դեր-Գոլց գեներալներով և դեսպան Վանկենհայմով թև տվեց Իթթիհատի պանթուրքական բանդագուշանքին և... ջնջեցին ողջ արևմտահայությունը՝ մի հինավուրց ժողովուրդ իր կուլտուրայով, արվեստով, ֆոլկլորով, սրբեցին մի ողջ ժողովուրդ իր բազմադարյան հայրենիքից, ջնջեցին նրա և՛ անցյալը, և ներկան, և՛ ապագան...»[4]։ Թարմ էր, շատ թարմ էր ջարդերի հիշողությունը, որպեսզի չհիշվեին այս բաները, որպեսզի Իսահակյանը չհիշեր իր անզոր զայրույթը այն տարիներին եվրոպական պետությունների և հատկապես Գերմանիայի դեմ, թեև ինքը գերմանական մշակույթի գիտակ էր և սիրահար։

Բայց միայն պատմությունը չէր։ Հայերի մեջ, ամբողջ աշխարհում, չէր կարող խորագույն տագնապ չհարուցել հիտլերականների վերաբերմունքը հայության հանդեպ։ Արդեն 1942-ին կային այդ վերաբերմունքը վկայող փաստեր։ Իսահակյանը այդ մասին գրում է. «Հայ ժողովուրդը ունեցել է բարբարոս, ավերիչ շատ թշնամիներ, որոնք դիտել է իբրև տարերային չարիքի և նրանց լծի տակ հեծելով հանդերձ՝ նա իր ստեղծագործական ոգու բարձունքից արհամարհել է նրանց և հաճախ կամեցել է ներել, մոռանալ, սակայն չի կարողացել մոռանալ «քաղաքակրթված» մի ժողովրդի պետությունից ստացած մահացու հարվածները, մի ժողովրդից, որն իրեն «կուլտուրտրեգեր» է կոչում՝ գերմանական պետությունը։ Ահա այդ՝ հավերժապես անարգելի փաստն է նկատի ունեցել գեներալ Դյորինգը, երբ նա Միության դեմ սկսված պատերազմի նախօրյակին «Կանաչ գրքի» մեջ հրահանգներ է տվել իր զորքին՝ Միությունը կազմող ժողովուրդների հանդեպ ինչպիսի դիրք բռնելու նկատմամբ։ Մասնավորապես հայերի մասին հրահանգում է նա՝ ի նկատի ունենալ հայերի առանձնապես անբարյացակամ վերաբերմունքը գերմանացիների հանդեպ»[5]։ Հետագայում, Նյուրենբերգյան դատավարության ընթացքում և ավելի ուշ, հայտնաբերվեցին փաստաթղթեր, որոնք վկայում էին, որ Հիտլերը և իր շրջապատը ոչ թե սոսկ կասկածամիտ, այլ որոշակիորեն անբարյացակամ վերաբերմունք ունեին հայ ժողովրդի նկատմամբ, և նրանց

---

3 Ավետիք Իսահակյան. Երկերի ժողովածու. հ. 5, Երևան, 1977, էջ 341։

4 Նույն տեղում, էջ 343։

5 Նույն տեղում, էջ 342։

հաղթանակի դեպքում Խորհրդային Հայաստանը դժվար թե կարողանար խուսափել այն ճակատագրից, որն ունեցավ Արևմտյան Հայաստանը[6]։

Իսահակյանի, Չոպանյանի, Դեմիրճյանի և այլոց վերաբերմունքը ֆաշիզմի և պատերազմի հանդեպ ամենևին չպետք է կապել կոնկրետ գաղափարախոսությունների հետ։ Գաղափարախոսությունները այս խնդրում կարող էին միայն երանգներ բերել։ Բայց գլխավորը, էականը որոշվում էր ժողովրդի փորձով։ Եվ դրա համար էլ նույնիսկ մեր մշակույթի այն գործիչները, որոնք համակրանք չէին տածում ԽՍՀՄ-ի և խորհրդային կարգերի հանդեպ, միևնույն է, այս պատերազմը դիտում էին իբրև հայրենական, ազատության համար մղվող պատերազմ։

Ահա թե ինչ է գրում Կոստան Զարյանը իր «Նավը լեռան վրա» վեպի առաջաբանում, նրա առաջին հրատարակության մեջ 1943 թ. «Հայերեն ընագրին վիճակված է լույս տեսնել օտար մի երկրում, մի նոր, երկրորդ համաշխարհային ահավոր պատերազմի օրերին, երբ Հայաստանը, նորից զենքը ձեռին, պատրաստվում է պահել իր գոյությունը և դարբնել ապագան։ ...Այնտեղ, Հայաստանում հայ երգը, նախաքարնանային ջերմ հովի նման, վերադառնում է, տարիներով խափանված, իր ազգային ազատ թռիչքը և հայ ժողովուրդը, հրաշալի կեցվածքով, պատրաստվում է վերադառնալու իր բոն, լուսավոր ճակատագրին»[7]։ Խորհրդային կարգերի նկատմամբ վերաբերմունքը հստակորեն պետք է զատել պատերազմի նկատմամբ ունեցած վերաբերմունքից։

Ահա այս գիտակցությունը նոր ուժ էր տալիս հայ-ռուսական զինակցության և ժողովուրդների բարեկամության թեմային։ Այն դադարում էր պետական քարոզչության հերթական կլիշեներից մեկը լինելուց, որովհետև կապվում էր ժողովրդի գոյության գլխավոր խնդրի հետ։

Հայ-ռուսական հարաբերությունների թեման նորություն չէր հայ գիտակցության համար։ Ռուսական պետության հետ ունեցած երեքհարյուրամյա հարաբերությունների ընթացքում ամեն ինչ եղել էր, եղել էր և խոր հիասթափություն։ Բայց ամեն անգամ կյանքը թելադրում էր հայությանը, որ իր միակ ռեալ դաշնակիցը (հասկանալի է, բոլորովին էլ ոչ իդեալական) Ռուսաստանն է, ռուս ժողովուրդը։

Հայտնի է, որ Ավետիք Իսահակյանը, ժամանակին դաշնակցական կուսակցության ակտիվ անդամ, խորապես անբարյացակամ էր տրամադրված խորհրդային կարգերի, կոմունիզմի, կոմունիստական կուսակցության և նրա առաջնորդների հանդեպ։ Բայց դա չխանգարեց նրան գալու այն եզրակացության, որ ամեն ինչ պետք է արվեր հայերի կողմից ռուսների հետ չթշնամանալու, նրանց հետ դաշինք կապելու համար, անկախ այն բանից, թե ով կլինի իշխանության գլուխ Ռուսաստանում։ Նա նույնիսկ իր կուսակցությանը մեղադրում էր այն բանի համար, որ 1920 թ. մայիսին նրանք իշխանությունը չզիջեցին բոլշևիկներին, դրանով իսկ ռուսների հետ կապերն ամրապնդելու, նրանց հովանավորությունը շահելու և հայկական հողերի գոնե մի մասը պահելու համար։

1925 թ. Մարտիրոս Սարյանին ուղղված նամակում նա գրում էր այսօր արդեն լայնորեն հայտնի իր խոսքերը. «Շատ ուրախ եմ նույնպես, որ հայերից մասնակցող չեղավ վրացիների ափանտյուրային. ռուսական մի կարմիր զինվորի ներկայությունը հայոց երկրի սահմանների վրա արժե 1000 Վիլսոն ու Ազգերի լիգա, 1000 Մակդոնալդ ու Հերիո. սա բացարձակ ճշմարտություն է»[8]։ Այս տողերից հետո պատերազմի տարիներին կնոջը գրած նամակի

---

6 Այս մասին տե՛ս, օրինակ, Գ. Բարդակչյանի հետաքրքրական գրքույկը՝ «Հիտլերը և հայերի ցեղասպանությունը», որը հրատարակվել է անգլերեն և հայերեն (վերջինս՝ Երևան, 1991)։

7 Կոստան Զարյան. Նավը լեռան վրա. Բոստոն, 1943, էջ 9։

8 Ավետիք Իսահակյան. Երկերի ժողովածու. հ. 6, Երևան, 1979, էջ 199։

մի քանի տողը չեն կարող չգրավել կարդացողի ուշադրությունը, թեև դրանց բովանդակությունը առօրեական խոհերն են. «Այստեղ (էսենտուկիում— Ա. Ե.) նույնպես ժողովուրդը հանգիստ է և ինքնավստահ. զգում ես, որ ռուսը շատ մեծ և հանգիստ ժողովուրդ է. ջղայնություն չի ցույց տալիս. հավատացած է վերջնական մեր հաղթանակի մասին»[9]։ Դժվար չէ հասկանալ, որ այս փոքրիկ նամակը ռուսական բնավորության մի գծի սոսկական արձանագրում չէ, այլ խորհրդածությունը մի մարդու, որ խորապես անհանգստացած է իր ժողովրդի ճակատագրով և որը լավ հասկանում է, որ այդ ճակատագիրը անխզելիորեն կապված է ռուս ժողովրդի ճակատագրի հետ. և դրա համար էլ «ռուսի հանգստությունը» այնքան կարևորություն է ստանում հայ բանաստեղծի համար։

Երբ Իսահակյանը, Դեմիրճյանը, Հովսեփ Օրբելին և ուրիշները արծարծում էին ռուս ժողովրդի առաքելության, խորհրդային ժողովուրդների բարեկամության թեման, դա սոսկական տուրք չէր ժամանակի քարոզչական սխեմաներին։ Ինչպիսին էլ լինեին բառերը, իմաստը մեկն էր՝ հայ ժողովուրդը փրկվելու է ռուս ժողովրդի և Խորհրդային Միության մյուս ժողովուրդների հետ մեկտեղ, ուս-ուսի։ Իր արդեն հիշատակված հոդվածում, հայ ժողովրդի անցած պատմական ճանապարհը ներկայացնելուց հետո Իսահակյանը գրում է. «Ահա այս պիտի գիտենա հայ զինվորը, երբ հանդիպի գերման զորքին։ Եվ պիտի գիտենա նաև, որ հայ ժողովուրդը իրավունք ունի մահի պես ատելու իր թշնամուն և սիրելու իր բարեկամին՝ ռուս մեծ ժողովրդին։ Եվ ահա ինչու, երբ բացավառվեց սոցիալիստական հեղափոխությունը, հայ ժողովուրդը նրա մեջ տեսավ իր դարավոր փափագների կենսագործումը։ Նրա մեջ գտավ իր փրկությունը»[10]։ Իսկ Դերենիկ Դեմիրճյանը 1943 թ. տպագրված իր հոդվածում («Հայ հերոսական ժողովուրդը» շատ բնորոշ խորագրով) ասում է. «Գաղափարը մեծ է և պարզ միաժամանակ—Սովետական Միության գոյության հետ օրգանապես կապված է նաև հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը»[11]։ Ահա գլխավորը, այն, ինչ զբաղեցնում էր հայ մտավորականության միտքը պատերազմի տարիներին՝ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը։

Բայց մենք անարդար կլինեինք մեր մտավորականության և մեր ժողովրդի հանդեպ, եթե պատերազմին հայ ժողովրդի ակտիվ մասնակցությունը բացատրեինք միայն իր գոյությունը պահպանելու ձգտմամբ։ Պատերազմական ժամանակների հրապարակախոսության մեջ պարզորեն լսվում է և մի ուրիշ շատ կարևոր մոտիվ՝ հայ ժողովուրդը ամբողջ մարդկության հետ միասին մասնակցում է համաշխարհային մշակույթի պաշտպանությանը ընդդեմ գերմանական խավարամոլության, ընդդեմ ֆաշիզմի ավերիչ բնազդների։ Դերենիկ Դեմիրճյանը իր հոդվածներից մեկում, համեմատելով ֆաշիստներին և միջնադարյան բռնությունները, շեշտում է ֆաշիստների տարբերությունները միջնադարից։ Միջնադարում ամեն ինչ տարերային էր, ֆաշիստների մոտ՝ ամեն ինչ կազմակերպված, մեթոդիկ. և դա ֆաշիզմը դարձնում էր անհամեմատ սարսափելի, անհամեմատ վայրագ։ Եվ հենց Դեմիրճյանը իր արդեն հիշատակված «Հայ հերոսական ժողովուրդը» հոդվածում առաջ է քաշում հայ ժողովրդի հերոսականության մի բավական հետաքրքրական բացատրություն։ Նա կտրուկ մերժում է «վեհերոտության մեղադրանքը հայ ժողովրդի հասցեին և կրկնում ու երեքկնում է՝ «Հայ ժողովուրդը կռվող ժողովուրդ է»։ Եվ ապա. «Հպարտություն է ծնում մարդու մեջ, երբ մտածում ես, թե ինչպես ապրեց ու վերապրեց այս ժողովուրդը։ Բնականն ու հնարավորն այն էր, որ նա իսկապես չպիտի ապրեր։ Բայց և հրաշքով չէ, որ նա ապ-

---

9 Նույն տեղում, էջ 357։

10 Նույն տեղում, հ. 5, էջ 343։

11 Դերենիկ Դեմիրճյան. Երկերի ժողովածու. հ. XII, Երևան, 1985, էջ 284։

բեց։ Ապրեց նա, դիմացավ ունենալով դրա ուրիշ հիմքերն ու պատճառները։

Եվ ի՞նչն էր հայ ժողովրդի պայքարի նետվող հատկությունների հիմքը—նրա ազատասիրությունը։ Ի՞նչն էր նրա ազատասիրության դրդիչը—նրա կուլտուրան, նրա բարձր կուլտուրան՝ իրեն շրջապատող նվաճողների հանդեպ։ Եվ այստեղ էլ զարմանալի բան չկա—հայ ժողովուրդը բարձր կուլտուրա մշակելու համար ունեցավ 3000-ամյա կյանքի հասակ, հազարամյակների գործ ու փորձ»[12]։ Հերոսականության այս մեկնաբանությունը մի կողմից, անկասկած, հակադրությունն էր հերոսականության այն ըմբռնման, որի կրողն էին ֆաշիստները և որն, ըստ էության, մշակույթի ժխտումն էր։ Բայց, մյուս կողմից, դա մեր ողջ պատմության հետաքրքրագույն մեկնաբանությունն էր։ Հայտարարելով, որ հայ ժողովուրդը կռվող ժողովուրդ է, Դեմիրճյանն այդ հայտարարությունը հիմնավորում էր մեր բազմադարյան մշակույթով, այդպիսով փոխադարձաբար պայմանավորելով հայ ժողովրդի պատմական կերպարի երկու կարևորագույն գծերը։

Զգացվում է, որ այս միտքը կարևոր է եղել Դեմիրճյանի համար։ Քիչ հետո նա նորից հարց է տալիս. «...Ինչպե՞ս կարող էր նա (հայ ժողովուրդը—Ա. Ե.) կռիվ չմղել՝ շարունակ ստեղծելով Խորենացիներ, Նարեկացիներ, Նահապետ Քուչակներ, Ճարտարապետ Տրդատներ, Անանիա Շիրակացիներ, Վարդան զորավարներ, մանրանկարիչ Ռոսլիններ, Սայաթ-Նովաներ, Բաֆֆի, Շիրվանզադե, Թումանյան, Իսահակյան և ուրիշներ»[13]։ Ուրեմն այսպես, հայ ժողովուրդը մարտնչող, կռվող ժողովուրդ էր, և կռվելու նրա կամքը, նրա հերոսականությունը սերտորեն կապված էին նրա հազարամյա մշակույթի հետ։ Սա ժողովրդի կերպարի մի ըմբռնում էր, որ ուղիղ հակադրությունն էր ֆաշիստների ստեղծած տիրող ժողովրդի կերպարի, որի մեջ մշակույթին խորապես ծառայական, տասներորդական տեղ էր հատկացված։

Ահա այսպիսի ժողովուրդը չէր կարող ամենաակտիվ մասնակցությունը ցույց չտալ ֆաշիզմի դեմ մղվող պայքարին, և մեր գրողներն ու մշակույթի գործիչները մեկ անգամ չէ, որ հպարտությամբ ընդգծում են հենց այս՝ հայ ժողովուրդը աշխարհի բոլոր կուլտուրական ժողովուրդների հետ կողք-կողքի պայքարում էր հանուն մշակույթի, հանուն ստեղծագործելու իրավունքի։ Այս մոտիվը շատ է սրվում Իսահակյանի հոդվածներում։ Նա, որ այնպես գիտեր և սիրում էր գերմանական մեծ մշակույթը, խոր ցավ էր ապրում ֆաշիզմի հակամշակութային, մարդկությանը հարյուրամյակներով ետ նետող, բուն իսկ գերմանական մեծ մշակույթի ավանդները ոտնահարող վարքի համար։ Ֆաշիզմը «գազազած գալիս է մահացու հարվածներ տալու կուլտուրայի առաջապահ ժողովուրդներին, ոչնչացնելու նրանց հոյակապ քաղաքները, արվեստի հրաշակերտները, կողոպտելու նրանց ինչքը և բռնագրավելու նրանց հողերը և, վերջապես, լծի տակ քաշելու աշխատավոր մասսաներին, նորից մխրճելու ազատագրված մարդկությունը միջնադարյան ստրկական, խավար կարգերի մեջ, որոնք «հիտլերյան նոր կարգ» անունով պիտի վերակենդանանան՝ միաժամանակ իրենց հետ վերակենդանացնելով ինկվիզիցիայի սարսափները, ֆեոդալների անսանձ շահատակությունները, հոգու և մարմնի ճորտությունը և հոգու տգիտությունը»[14]։ Այս կետում ևս հայ մտավորականությունը համակարծիք էր Հայաստանում և սփյուռքում (հիշենք Չոպանյանի խոսքերը, ասված 1939-ին)։

Բայց վերադառնանք Դեմիրճյանի հոդվածին։ Հայ գրողը, հայ ժողովրդի պատմության լավագույն գիտակներից մեկը հպարտ է ոչ միայն պատմությամբ և մշակութային մեր նվաճումներով, այլև ներկա պատերազմին մեր ակտիվ, հերոսական մասնակցությամբ, և «հերոսական ժողովուրդ» արտահայտությունը վերաբերում է և՛ պատմությանը, և՛, հավասար չափով, Հայ-

---

12 Նույն տեղում, էջ 280։

13 Նույն տեղում, էջ 282։

14 Ավետիք Իսահակյան. Երկերի ժողովածու. հ. 5, էջ 339։

բենական պատերազմին։ «Ոչ, հայ ժողովուրդը կռվող ժողովուրդ է։ Մեծ հայրենական պատերազմի դյուցազներգության մեջ առաջին տեղերից պիտի բռնեն նաև հայ հերոսները, որոնց անունները շարունակ արձանագրվում են ռազմական տեղեկագրություններում»[15]։ Եվ այնուհետև մի երկար շարք հայ մարտիկների, որոնց մասին խոսում ու գրվում էր մոսկովյան թերթերում և ռադիոյով։ «Հայ ժողովուրդը մասնակցում է մարդկության ազատագրության մեծ գործին»[16]—հպարտությամբ արձանագրում է Դեմիրճյանը։ Դեմիրճյանը, որն այնպես լավ էր ճանաչում իր ժողովրդին, ճիշտ էր գուշակել՝ հայ ժողովուրդը Հայրենական պատերազմի պատմության մեջ բռնեց առաջին տեղերից մեկը՝ և՛ զոհերի, և՛ հերոսների, և՛ զորավարների թվով։ Եվ դա ոչ թե ռազմատենչության արտահայտություն էր, որ ավելի կվայելեր պատմական և մշակութային ավելի կարճ ճանապարհ անցած ժողովրդին, այլ հողի և ազատության, հայրենիքի և հոգևոր արժեքների պաշտպանության, գիտակցված անձնազոհության արտահայտություն։ Հայրենական մեծ պատերազմին մեր ժողովրդի մասնակցության ահա այս մակարդակը պետք է լինի և արդեն դարձել է մեր պատմության կարևորագույն դասերից մեկը։

Մինչ այժմ խոսքը գնում էր հրապարակախոսության մասին։ Բայց գրականությունը տվեց նաև այլ տիպի վկայություններ։

Պատերազմի առաջին օրերին ու ամիսներին շատ բանաստեղծություններ գրվեցին։ Մենք իրավունք ունենք դրանցից երեքը առանձնացնելու իրենց գեղարվեստական կատարելությամբ։ Դրանք գրված էին գրական երեք տարբեր սերունդների ներկայացուցիչների կողմից։ Խոսքը Ավետիք Իսահակյանի «Ռազմակոչ», Նաիրի Զարյանի «Դու քաղցր ես, հող իմ հայրենի» և Հովհաննես Շիրազի «Մենք խաղաղ էինք մեր լեռների պես» հանրահայտ բանաստեղծությունների մասին է։ Թերևս ոչ մի հրապարակախոսական հոդված այդքան հստակ և այդքան մեկին չի ապացուցում այն ճշմարտությունը, թե այս պատերազմը հայրենական պատերազմ էր հայ ժողովրդի համար, ինչքան այս բանաստեղծությունները։

Գիշեր է մռայլ, ամպամած գիշեր։
Հողմեր են փչում, շաչում են հողմեր
Դավաճան երկրից մեր նենգ թշնամու
Մեր նվիրական դաշտերի վրա։
Գոռ ալիքներն են լեռնանում ընդոստ
Մեր խռովահույզ ծովերի վրա
Է՜յ ազատ Մասիս, երկնասույզ գահեր,
Է՜յ երկաթակուռ խրոխտ զագաթներ,
Շանթե՞ր եք զոդում, սուրե՞ր եք կռում,
Հրեղեն ցասում ընդդեմ թշնամուն։

Բանաստեղծությունը գրված է 1941 թ. հունիսի 26-ին, Էսենտուկիում։ Քաղաքական պատվերի մասին խոսք լինել չի կարող։ Դա հայ բանաստեղծի, այն էլ կյանքի և ստեղծագործության երկար և բարդ ճանապարհ անցած բանաստեղծի անմիջական, անխաթար արձագանքն է պատերազմի սկսվելուն։ Եվ այն, որ բանաստեղծի երևակայության մեջ անմիջապես բարձրանում է Ազատ Մասիսը, հայրենի լեռնաստանի պատկերը, որը պատրաստվում է մարտնչելու նենգ թշնամու դեմ, նորից ու նորից մեզ բերում է հայրենական պատերազմի խնդրին։ Իսահակյանի բանաստեղծությունը պայքարի կոչ էր իր երկրին, իր Հայաստանին, ապա և ամբողջ Միությանը՝ «ժողովուրդներ քաջ»։ Բայց ամբողջ սրտով նա Հայաստանի հետ էր. ոչ միայն հայրենի բնության հիշատակությունը, այլև բանաստեղծության ամ-

---

15 Դ ե ր ե ն ի կ Դ ե մ ի ր ճ յ ա ն. Երկերի ժողովածու. հ. XII, էջ 385։
16 Նույն տեղում, էջ 388։

բողջ կառուցվածքը, ոճը գալիս են մեր գրականությունից, մեր մտածողությունից, իր՝ Իսահակյանի ողջ նախորդ ստեղծագործությունից. դա կարծես դարասկզբի խրոխտ երիտասարդ բանաստեղծն էր...

Ապա՝ Շիրազի դասական «էքսպրոմտը»՝ խորապես հայկական, հայրենաշունչ, զորեղ բանաստեղծություն, որի մեջ այնքան ուժ ու հավատ կա, և հայրենական պատերազմի այդ նույն զգացողությունը՝

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ։
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ։
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչիք վայրագ։

Այսպես կարող էր գրել միայն հայ բանաստեղծը Հայաստանի վրա կախված վտանգի պահին։

Այսպես էր հայ ժողովուրդը ընկալում երկրորդ համաշխարհային պատերազմը՝ իբրև մի պատերազմ, որն ինքը, իրեն բախտակից մյուս ժողովուրդների հետ մղում էր հանուն իր գոյության իրավունքի և ազատության, հանուն մշակույթի և բարձրագույն հոգևոր արժեքների։

2

Պատերազմի չորս տարիները Հայաստանին բերեցին անհամար զրկանքներ, սով գյուղական շրջաններում, մարդկային զանգվածների թշվառություն և այլն։ Անցած տարիների պատմագրության մեջ այս տարիների ամբողջական պատկերը չստեղծվեց։ Պատմագրության պաշտոնական սխեմաները շատ բան վարագուրեցին։

Բայց, զարմանալիորեն, այդ տարիները նաև հոգևոր վերելքի տարիներ եղան։ Թվում էր, թե երեսնական թթ. ռեպրեսիաներից, գնդակահարություններից ու աքսորներից հետո մեր արվեստն ու գրականությունը դեռ երկար չպետք է ոտի կանգնեին։ Այնինչ պատերազմին անմիջականորեն նախորդող տարիներին արդեն զգացվեց վերակենդանացման շունչը։ Իսկ պատերազմը բերեց արվեստի և գրականության մի քանի փառահեղ, մնայուն գործեր։

Այս երևույթը անբացատրելի պարադոքսների թվին չպետք է դասել։ Հայ ժողովրդի պատմության մեջ դա իսկապես աննախադեպ մի փիճակ էր, որն իր համարժեք արտահայտությունն ստացավ մշակույթի մեջ։ Այս պատերազմը երկար դարերի ընթացքում թերևս առաջին մեծ պատերազմն էր, որի ժամանակ հայ ժողովուրդը համեմատական ապահովության զգացում ուներ։ Նա իր թիկունքին զգում էր ռուս ժողովրդի, Խորհրդային Միության պաշտպանությունը։ Թուրքերի հանդեպ սահմանները հուսալիորեն պաշտպանված էին խորհրդային զորքերի կողմից։ Հյուսիսից ֆաշիստական սպառնալիքի առաջն առնում էին դարձյալ խորհրդային զորքերը։ Հարյուր հազարավոր հայեր կռվում էին ճակատներում։ Սակայն Խորհրդային Հայաստանն այդպիսի մի ահեղ պատերազմի պայմաններում անչափելիորեն ավելի պաշտպանված էր, քան Առաջին հանրապետությունը, և դրա հետ միասին ուներ իր սեփական պետական կառուցվածքները, իր մշակույթի զարգացման բարենպաստ հնարավորություններ (որոնց վրա, դժբախտաբար, իրենց կնիքն էին դրել խորհրդային համակարգին հատուկ կաշկանդումները)։

Պատերազմը անհուսություն ու սարսափ չէր սերմանում հայության մեջ։ Հավատում էին հաղթանակին, հավատում էին, որ թուրքերը չեն մտնի Հայաստան։ Դեռ ավելին, հավատում էին, որ հաղթանակի դեպքում կարող են ազատագրվել սահմանից այն կողմ մնացած մեր հողերը։ Այս երկարատևությունը հույսերը, ի վերջո, ի դերև ելան։ Բայց նաև իրողություն էր այն,

որ դա այն շատ քիչ պատերազմներից էր, որի ընթացքում Հայաստանը տարածքային կորուստներ չունեցավ, նրա սահմանները չոտնահարվեցին։

Այս էր պատճառը, որ Հայաստանը այն տարիներին, չնայած պատերազմի բերած զրկանքներին ու թշվառություններին, ապրում էր լիարյուն հոգևոր կյանքով։ Բեմադրություններ էին արվում, ցուցահանդեսներ էին բացվում, սիմֆոնիաներ էին կատարվում, գրքեր էին տպագրվում։ Հիշենք, առանց հատուկ ընտրության, միայն մի քանի փաստ։ 1944 թ. Հայաստանում տեղի ունեցան շեքսպիրագիտական կոնֆերանս և փառատոն. Հայաստանն էր ընտրվել ոչ միայն այն պատճառով, որ ռազմաճակատից համեմատաբար հեռու էր, այլև շնորհիվ իր շեքսպիրական մեծ ավանդույթների։ Միջոցառումներն անցնում էին լիքը դահլիճներում, հանդիսականների շահագրգռվածության և ըմբռնողության պայմաններում։

Դեմիրճյանի երկերի ակադեմիական ժողովածուում տպագրված է նրա մի փոքրիկ հոդվածը Շոստակովիչի հռչակավոր 3-թերորդ սիմֆոնիայի երևանյան կատարման մասին։ Եվ, վերջապես, հիշենք Մարտիրոս Սարյանի այն տարիների նկարները՝ արևոտ ծաղիկները, որպես նվեր մարտիկներին, ինքնանկարը և այլն։

Արվեստագետներից, գրողներից ու մշակույթի այլ գործիչներից շատերը գտնվում էին ռազմաճակատում, բայց այդ էլ չխանգարեց հոգևոր կյանքի ընթացքին։

Հայ գրականության այդ տարիների լավագույն գործերի մեջ արծարծվում էին ժողովրդի գլխավոր բարոյական արժեքները անկախ կոնկրետ թեմատիկայից։

Քնարերգության մեջ նորից հառնեց մայրենի լեզվի խնդիրը, որ հայ գրականության ավանդական թեմաներից մեկն էր դեռ Աբովյանի ժամանակներից։ Արդեն պատերազմից առաջ Նաիրի Զարյանը գրեց իր հայտնի բանաստեղծությունը՝ «Հայերեն (մի հայուհու)», որի մեջ խորհրդային շրջանում առաջին անգամ տագնապ ու հոգս կար մայրենի լեզվի ճակատագրի համար։ Իսկ 1943 թվականին գրված «Հայոց լեզուն» բանաստեղծության մեջ նա կատարում է ճշմարիտ, ապրված մի ընդհանրացում՝

Կմոլորվեր մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներին,
Կրկորչեինք, եթե ճամփին չրոցկլտար հայոց լեզուն։

Սա շատ բարձր էր ոչ այնքան հեռու ժամանակների քաղաքական աղքատ սխեմաներից, որոնց իր տուրքն էր տվել նաև Զարյանը։ Սա ազգային ոգու, ազգային մշակույթի ճշմարիտ գնահատություն էր, որ դարձյալ ու դարձյալ շատ էր համապատասխանում հայրենական պատերազմի զգացողությանը։

Սիլվա Կապուտիկյանը գրեց «Խոսք իմ որդուն» բանաստեղծությունը, որն անմիջապես տարածվեց ոչ միայն Հայաստանում, այլև Սփյուռքում։ Այստեղ էլ պատերազմի շունչն զգացվում էր անուղղակիորեն։ Բանաստեղծությունը ծնվել էր պատերազմի ստեղծած մթնոլորտում, բայց իր նշանակությամբ դուրս էր գալիս այդ կոնկրետ պատմական պահի շրջանակներից, դառնալով առհասարակ պատգամ հայության բոլոր երիտասարդ սերունդներին։

Պատերազմի ժամանակների ամենասիրված և ամենարնորոշ գործերից էին Համո Սահյանի «Նաիրյան գալար բարդին» և Գեղամ Սարյանի բանաստեղծությունները՝ «Կարոտ» և «Սերմնացանները չդարձան տուն»։ Այս գործերի մեջ, գաղափարախոսական պաճուճանքներից ազատ, անկեղծ ու նուրբ լսվում է հայրենի հողի, նրա նկատմամբ կարոտի թեման, որ մեր բանաստեղծության մեջ սկսվում է դեռ հեթանոսական ժամանակներից, երբ հյուսվել է հայրենիքից հեռու մեռնող արքայի մենախոսությունը՝ Ո՞ տայր ինձ զծուխն ծխանի։ XIX դարում այն հարստացավ «Ծիծեռնակ» (Գևորգ

Դողոխյանի բառերով) և «Երաշ» (Սմբատ Շահազիզի գեղեցիկ բանաստեղծության տեքստով) երգերով։ Գեղամ Սարյանի «Կարոտը», որ ավելի հայտնի է «Սարտիկի երգը» անունով, ուղղակիորեն լրացնում է այս բանաստեղծությունների շարքը։ Պատերազմը վերջացավ, իսկ բանաստեղծությունը իր ուժը պահեց, որովհետև մոր ու հայրենիքի կարոտը հավերժ մարդկային է ու խորապես հայկական։ Նրա հայկականության ակունքները մեր պատմության, մեր թափառումների մեջ են։ Պատահական չէ, որ Աշոտ Սաթյանի երաժշտությունը ևս այնքան սիրվեց, ու այս երգը դարձավ ժամանակի լավագույն գեղարվեստական հուշարձաններից մեկը։ «Սերմնացանները...» մեր նորագույն շրջանի քնարերգության ուժեղ գործերից է, ողբերգական, բայց ներքին հավատով լիքը։ Հողը, երկիրը տառապում է զոհված սերմնացանների համար, և հայրենի հողի ու մարդու այս միասնությունը ևս մեր ազգային գիտակցության խորքերից է գալիս։

Հայաստանի բնության հավերժական խորհրդանիշներից մեկը՝ բարդին, դառնում է Համո Սահյանի «Նաիրյան դալար բարդի» բանաստեղծության առանցքը։ Այս բանաստեղծությունը Համո Սահյանի ամենազարմանալի բռնկումներից մեկն է։ Դեռ հեռու էին այն երեք տասնամյակները (1960—1980), երբ նա դարձավ նորագույն հայ բանաստեղծության առաջատարներից մեկը։ «Սաիրյաս գալար բարգիով» Սահյանը կարծես շտապում էր իր տուրքը մատուցել մեծ պատերազմին, հավաստելով հայրենի երկրի, նաիրյան դալար բարդու համար մեռնելու իր վճռականությունը՝

Կմեռնեմ, միայն թե դու դարերում ազատ խշշաս,
Իմ հեռու, հեռու, հեռու Նաիրյան դալար բարդի։

Պատերազմական ժամանակների հայ գրականության ամենանշանավոր գործերից մեկը եղավ «Ձայն հայրենական» պոեմը, որի մեջ Ն. Զարյանը ժողովրդի անունից ոգեկոչում էր հայոց ողջ պատմությունը, հին հերոսների փառքով, առասպելական Հայկից ու Զարմայր Նահապետից մինչև Խաչատուր Աբովյան, մինչև նորագույն ժամանակները՝ հայ ռազմիկներին ոգևորելու համար։

Եվ պատմության գռեհիկ-դասակարգային ըմբռնումը այստեղ տեղը զիջում է բնականոն, չխաթարված հայացքին, և Տիգրան Սեծի անունը դրվում է, ասենք, Խաչատուր Աբովյանի անվան կողքին։ Հայտնի է, թե այդ պոեմը ինչքան ուժեղ հնչեց պատերազմի տարիներին, ինչքան սիրված էր ոչ միայն թիկունքում, այլև ռազմաճակատում։ Այս պոեմը գեղարվեստական վկայություններից մեկն էր այն իրողության, որ պատերազմում է հայ ժողովուրդը, և հայ զինվորները զինվորներ են ոչ օտար բանակում։

Պատմությունը ուրիշ կերպ հառնեց Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության մեջ։ Զարյանը դիմեց մեր հնագույն առասպելներից մեկին, որի գրառումը մնացել էր Խորենացու մատյանի էջերում։ Այս առասպելը հայ բանահյուսության ամենանշանակալից, ամենաազգային կոթողներից մեկն է. հավատարմության այդ պաթոսը մեր մշակույթի կենտրոնական լարերից մեկն է եղել։ Պատահական չէ, որ XX դարի հայ բանաստեղծության մեջ այդ առասպելի մոտիվները հանդիպում են ոչ մեկ անգամ։ Դեռ 1910-ական թթ. Վահան Տերյանը իր հայտնի բանաստեղծության մեջ գրում էր.

Ձե՛մ դավաճանի իմ Նվարդին,
Որքան էլ դյութես, օ՜ Շամիրամ...

Իսկ Զարենցը «Շամիրամ» բալլադում («Փողոցային պչրուհուն» շարքից), հայրենիքի ճակատագրի իր այդ տարիների ողբերգական զգացողությանը միանգամայն համապատասխան, գրում էր.

Նա կմեռնի որպես զոհ—բայց չե՛ս հաղթի դու նրան.
—Դա՜ն է խորհուրդը սիրո, շամբշոտաշո՛ւրթ Շամիրամ...

Առասպելական արքայի հավատարմությունը երկրին, սիրուն, ընտանիքին միանգամայն ժամանակակից հնչեղություն էր ստանում մեզ համար այնքան դժվար XX դարում։ Հենց դա էլ դարձավ Զարյանի «դիցապատմական ողբերգության» (ինչպես հեղինակը բնորոշել է իր պիեսի ժանրը) գլխավոր պաթոսը։ Զարյանի հերոսները մի կողմից կենդանի մարդիկ են, որոնք սիրում են, խանդում, տառապում։ Բայց այս բոլոր առօրյա, մարդկային կրքերը մոնումենտալ են, ուժեղ, իսկապես ողբերգական, որովհետև նրանց հետ կապված է ոչ միայն մի, թեկուզ արքայական ընտանիքի, այլև ամբողջ երկրի ճակատագիրը։ Անհատական ողբերգությունների և հայրենիքի ճակատագրի այս օրգանական միահյուսումը, գումարած վարպետորեն վերստեղծված հեթանոսական ժամանակների պատրանքի հետ, այս գործը դարձրին ոչ միայն Զարյանի, այլև մեր ողջ նորագույն բանաստեղծության լավագույն երկերից մեկը։

Ժամանակին Դերենիկ Դեմիրճյանը, ինչպես վկայում են նրա օրագրերը, վերապահումով. վերաբերվեց «Արա Գեղեցիկ»-ին։ Բայց այսօր, տարիների հեռվից քննելիս համոզվում ենք, որ շատ ընդհանուր բան կար Դեմիրճյանի «Վարդանանքի» և Զարյանի պիեսի մեջ։ Դա նախ և առաջ ճակատագրական խնդիրներում զիջումների չդնալու այն վճռականությունն է, որ բնորոշում էր երկու գործերի գլխավոր հերոսներին։ Զարյանի ողբերգության հերոսներից մեկը՝ Կաթմոս վաճառականը, իր արհեստին միանգամայն համապատասխան գտնում է, որ Արան պետք է ընդու.ի Շամիրամի առաջարկությունը և դառնա նաև Ասորեստանի արքա։ Բայց Արան մերժում է այդ ճանապարհը, գերադասելով մարտնչել ցանկասեր ու բռնակալ Շամիրամի դեմ, պահպանելով իր ընտանիքի ու հայրենիքի պատիվը։ Այս է բարձրացնում և՛ առասպելական Արային, և՛ Զարյանի հերոսին։ Դեմիրճյանի վեպում կա հայ ազնվականության մի ամբողջ շերտ, որ չի հասկանում, թե հայերը ինչու պետք է մարտնչեն Պարսկաստանի դեմ, ինչու չպետք է ընդունեն զրադաշտականությունը։ Դեմիրճյանի վեպը տալիս է այն ժամանակների հայ իրականության համայնապատկերը, տալիս քաղաքական տարբեր տրամադրությունների մանրամասն գեղարվեստական քննությունը, մերժելով վասակյանների մոտեցումը։ Վասակյանների վարքի մոտիվների շատ ավելի մեծ բազմազանություն կա վեպում։ Բայց Վարդանն ու իր կուսակիցները աներեր կանգնած են դիմադրության դիրքերում, հրաշալի գիտակցելով դրա հետևանքները։ Եղիշեի «իմացյալ մահվան» դրույթը միս ու արյուն է առնում վեպի ամբողջ ընթացքում, հատկապես, իհարկե, Վարդան Մամիկոնյանի կերպարում։

Այս կետը, թերևս, վեպի ամենաէական առանձնահատկությունն է։ Դեմիրճյանը զարգացնում է հայ ժողովրդի պատմության մի ամբողջ փիլիսոփայություն, որի արմատները, անկասկած, Եղիշեի մատյանի մեջ էին։ Իհարկե, Դեմիրճյանը հրաժարվում է կրոնական չերմեռանդության այն տարերքից, որով համակված է Եղիշեի գիրքը. այդ չերմեռանդությունը նա հատկացնում է հայրենասիրությանը և հայրենի ավանդներին հավատարիմ մնալուն։

«Վարդանանքի» տպագրությունից առաջ «Սովետական գրականություն» ամսագրում նա հրապարակում է իր ուսումնասիրությունը վարդանանց պատերազմի մասին, ճշգրտելով իր մոտեցումները և նաև ընթերցողին նախապատրաստելով իր վեպի ընկալմանը։ Ահա այդ աշխատանքի՝ իմ կարծիքով կենտրոնական դրույթներից մեկը. «Իրոք ի՞նչ էր հայ ժողովրդի պայքարը իրեն շրջապատող բռնության դեմ, իբրև մի քրիստոնյա ժողովրդի, որ կրում էր առաջավոր կուլտուրայի պսակը։ Մի՞թե դա իր ամբողջ բնույթով վկայաբանական չէ։... Հայ ժողովուրդը երբեմն ամբողջ կազմով դուրս է եկել նահատակության։ Հենց վարդանանց պատերազմը ինքը՝ ինչպես և

ներկայացնում է Եղիշեն՝ նահատակության պատմություն է»[17]։ Սա է այն փիլիսոփայությունը (կամ փիլիսոփայության կարևորագույն տարրը), որ ընկած է «Վարդանանքի» հիմքում։ Վարդանանց պատերազմը նահատակություն էր ամբողջ ժողովրդի, բայց ոչ թե հանուն ետմահու կյանքի բարիքների, ինչպես ընկալում էր կրոնական գիտակցությունը և ինչպես շատ հաճախ հնչում էր Եղիշեի մատյանի էջերում, այլ հանուն հետագա արժանապատիվ դոյության։ Ինչպես Դեմիրճյանն է ասում իր նույն ուսումնասիրության մեջ, «հայ ժողովրդի ազատությունը, նրա կուլտուրան և պատիվը փրկված էր արդեն»[18]։ Ուշադրություն դարձրեք բարոյական այն ուժեղ տարրին, որ կա այս եզրակացության մեջ։ Քաղաքականությունն ու բարոյականությունը սերտորեն միահյուսված են «Վարդանանքի» մեջ (ինչպես և «Արա Գեղեցիկում»)։ Սա ևս պետք է համարել մեր ազգային մտածողության կարևորագույն առանձնահատկություններից մեկը, որը այնպես ընդգծվեց Հայրենական պատերազմի տարիներին (ի միջի այլոց, Դեմիրճյանը իր այդ ուսումնասիրության մեջ Վարդանանց պատերազմը սովորաբար անվանում է հայրենական կամ Հայրենական Մեծ պատերազմ, այդ ձևով ընդգծելով V դարի և XX դարի պատերազմների կապը հայ ժողովրդի գիտակցության մեջ)։

Վեպի բարձրակետը դառնում են վերջին հատվածները, որտեղ նկարագրվում է Ավարայրի ճակատամարտը և Վարդանի ու իր զինակիցների նահատակությունը։ Պաթետիկան այստեղ կարող էր խարխլել հոգեբանական համոզչականությունը։ Բայց Դեմիրճյանի ուժը հենց նրանում էր, որ իր վեպի հերոսական պաթոսը և իր մեծաթիվ հերոսների արարքների հոգեբանական պատճառաբանվածությունը իրար չեն հակասում. ավելին, լրացնում են։ Վարդանն այդ պահին սոսկ սպարապետ չէր, այլ համաժողովրդական ապստամբության ղեկավար։ Նա գիտեր, որ մեծ զոհողություններ են պահանջվում, և ինքն առանց վարանելու զոհաբերում է ոչ միայն փրեն, այլև իր ամենասիրելի մարդկանց՝ որդուն և կնոջը։ Վարդանի կերպարում Դեմիրճյանը բացահայտել է ներքին այն հզոր պոռթկումը, առանց որի անհնար էր ուրիշներին տանել իր հետևից։ Հոգեբանորեն Վարդանի այս ոգին է նրան բարձրացնում ոչ միայն պարսից զորավարներից, որոնք փորձում էին մարտը վարել ռազմավարական հայտնի կանոններով, այլև հայ դավաճաններից՝ Վասակից և իր կուսակիցներից, որոնք հենվում էին ավելի կոնկրետ, ավելի երկրային հաշիվների վրա։

Ինքնազոհողության, նահատակության, ինչպես Դեմիրճյանն է ասում, այս պատրաստակամությունը մեր ժողովրդի ամենաբնորոշ գծերից մեկն է եղել նրա երկարատև և դժվարին պատմության շրջադարձերի ժամանակ։ Կարելի է նաև չընդունել Վարդանի քաղաքական դիրքորոշումը, ինչպես վարվում էին նոր ժամանակների որոշ պատմաբաններ, փորձել հասկանալ ու բացատրել Վասակի մարտավարությունը։ Բայց դրանից իրողությունը չի փոխվի՝ հենց Վարդանն ու նրա կուսակիցները դարձան հայ ժողովրդի ամենասիրված հերոսները. այն, որ եկեղեցին սրբերի շարքը դասեց Վարդանին, այս իրողության արտացոլումն էր։ Դեմիրճյանն ահա ճիշտ զգաց մեր պատմության այս առանձնահատկությունը և իր վեպով մի անգամ ևս հաստատեց հանուն կյանքի զոհվելու ժողովրդի հաստատակամությունը...

Երկրորդ պատմավեպը, որ հրատարակվեց Հայրենական պատերազմի տարիներին, Ստեփան Զորյանի «Պապ թագավորն» էր։ Ինքնին երկու այսքան ուժեղ պատմավեպերի երևան գալը գրեթե նույն տարին շատ բան էր ասում. մեր նոր արձակի այս սիրված ժանրը պատերազմի ժամանակ այսպիսի վերելք ապրեց, նորից հաստատելով ժողովրդի սևեռուն ուշադրությունը սեփական պատմության հանդեպ։

---

17 Դերենիկ Դեմիրճյան. Երկերի ժողովածու. հ. XII, էջ 314։

18 Նույն տեղում, էջ 311։

Բայց ուշադրության արժանի է, թե ինչքան մեկը մյուսից տարբեր գործեր էին այս վեպերը։ Տարբերությունները սկսվում էին արդեն պատմական պահերի ընտրությունից։ Դեմիրճյանը ընտրել էր ազատագրական պայքարի բարձրակետերից մեկը, վեպի կենտրոնում ունենալով դարերի ընթացքում ժողովրդի գիտակցության մեջ սրբի բարձրության վրա դրված հերոսի։ Դեմիրճյանի վեպը համակված էր անսքող պաթոսով, որը գեղարվեստորեն միանգամայն արդարացված էր նկարագրվող իրադարձություններով և գլխավոր հերոսի կերպարով։

Այնինչ Զորյանը դիմում էր մի շրջանի, որը մեր պատմության ամենադրամատիկ փուլերից մեկն էր, փուլ, որն ավարտվեց, ի վերջո, մեր պետականության կորուստով։ Եվ նրա գլխավոր հերոսն էլ մեկն է, որ չի հասնում իր նպատակին, զոհ դառնալով նենգ դավադրության։ Եվ ամենակարևորը՝ Զորյանը հաշտ չէ իր պատմական աղբյուրների հետ. մեր թերևս ուրիշ ոչ մի գործչի մասին պատմագրությունը այդքան հակակրանքով չի խոսել, ինչքան Պապի մասին։ Բուզանդը, ընդհանուր առմամբ չպաշտպանելով նաև Պապի հայր Արշակին, նրա մասին գրեթե երբեմն հիացմունքով է խոսում, հաղորդում այնպիսի մանրամասներ, որոնք նրան անկասկած բարձրացնում էին ժամանակակիցների և ընթերցողների աչքում։ Այնինչ Պապի մասին ասածները միայն խոր հակակրանք են ծնել նրա հանդեպ դարերի ընթացքում։ Եվ ահա վերլուծողի իր հայացքով Զորյանը ձգտում է մաքրել դարերի այս նստվածքը Պապ թագավորի կերպարից։ Պապի դրամատիկ ճակատագրի մեջ նա տեսնում է հայոց պատմության դրամատիզմը։ Դեմիրճյանը փնտրում է հայոց կենսունակության, դարերի անթիվ արհավիրքների մեջ ժողովրդի գոյատևելու գաղտնիքը, Զորյանը փորձում է հասկանալ մեր պատմության մռայլ ելևէջների պատճառները։

Արշակունի թագավորները ձգտում էին ստեղծել ամուր միասնական պետություն, որը ճկուն քաղաքականությամբ կարողանար դիմադրել երկու հզոր և նենգ հարևանների ոտնձգություններին. այնինչ հայ եկեղեցին և նախարարները անում էին ամեն ինչ այդ միասնությունը քանդելու և օտարներին Հայաստան բերելու համար։ Պապը ելնում էր ամբողջ երկրի շահերից, եկեղեցին և նախարարները՝ իրենց շահերից։ Եվ դժբախտությունն այն էր, որ դատապարտված էր հենց Պապը։

Պաթետիկան առհասարակ խորթ է Զորյանին. ռեալիստական չափավորությունը նրա գրական հավատամքի կարևորագույն տարրերից մեկն է։ Բայց այդ ռեալիզմի ներքին լիցքը նույն այն հայրենասիրությունն էր, որով համակված էր ողջ հայ պատմավիպասանությունը և որը «Պապը» դարձրեց մեր ժողովրդի ամենասիրված գրքերից մեկը։

Թվարկված ստեղծագործություններից իր թեմատիկայով առանձնանում է մեր նորագույն բանաստեղծության հանրահայտ երկերից Հովհաննես Շիրազի «Բիբլիական» պոեմը։ Այն ուղղակիորեն ոչ մի թելով չի կապվում պատերազմի հետ և նվիրված է մարդու փառաբանմանը։ Բնության բոլոր ստեղծագործությունների մեջ մարդը ամենաուժեղն է և ամենադիմացկունը. նա միայն կարող է հաղթահարել այն բոլոր դժվարությունները, որ բնությունը դնում է իր ստեղծած էակների առջև։ Պատերազմական դժվարագույն 1942 թ. այսպիսի բառիս ամենախոր իմաստով լավատեսական պոեմ գրելը վկայում էր ոչ միայն բանաստեղծի, այլև նրան ծնող ժողովրդի հոգեկան մեծ ուժի մասին, այն մասին, որ ժողովուրդը այդ ծանրադույն պահին մտահոգված էր ապագայով։ Պատահական չէ, որ Ավետիք Իսահակյանը Շիրազի ստեղծագործություններից առանձնացնում է առաջին հերթին «Էքսպրոմտը» և «Բիբլիականը». «Համաշխարհային գրական գոհարներ եթե կազմվեն, ես մեծ սիրով տեղ կտայի «Էքսպրոմտին», «Բիբլիականին» և այլ բանաստեղծություններին։ «Բիբլիականը» փիլիսոփայական մեծ տաղանդի գործ է»։

Շիրազի այս պոեմը մեզ նորից վերադարձնում է այն մտքին, որ գրականության վերելքը պատերազմի տարիներին ամենևին առօրյա քարոզչու-

թյան հետ չէր կապված։ Այդ քարոզչությունն ինքը միանգամայն բնական բան էր պատերազմի տարիներին, և Դեմիրճյանը, Ջորյանը, Ջարյանը, մյուսները, ամեն մեկն իր ձևով, իրենց մասնակցությունն են բերել այդ գործին։ Բայց օրվա պատվերով գրված գործերը մոռացվել են, մնացել են միայն գրականության պատմության հետաքրքրության առարկա։ Այնինչ այս հոդվածում հիշատակած գործերը մտել են մեր գրականության դասական արժեքների մեջ։ Լինելով պատերազմական մթնոլորտի ծնունդ, այդ գործերն իրենց նշանակությամբ կապվում են մեր ողջ հոգևոր կյանքի, մեր գլխավոր արժեքների հետ։

Այս ճշմարտության հաստատումն են նաև սփյուռքահայ գրականության երկու գործերը, որոնք հրատարակվեցին 1945 թ.՝ Անդրանիկ Ծառուկյանի «Խոսք առ Երևան» և Մուշեղ Իշխանի «Հայաստան» պոեմները։ Պատերազմը, այդ պատերազմին հայերի ակտիվ մասնակցությունը և Խորհրդային Միության հաղթանակը Սփյուռքում նորից վերարծարծեցին իրական հայրենիքի գաղափարը։ Խնդիրը միայն այն չէր, որ հաղթանակը նույնիսկ գաղափարական հակառակորդներին տրամադրում էր հաշտության։ Խնդիրն այն էր, որ պատերազմը ապացուցեց, որ Խորհրդային Հայաստանը այլևս ապահով է, պաշտպանված այն բոլոր վտանգներից, որոնք թունավորում էին հայ մարդու գոյությունը նույնիսկ նրա բնօրրանում։ Առաջին համաշխարհային պատերազմի ֆոնի վրա երկրորդի արդյունքները շատ բան պետք է փոխեին ողջ սփյուռքահայության պատկերացումների մեջ։ Նույնիսկ Արևմտյան Հայաստանի հողերի հետ կապված հիասթափությունը չէր փոխում այն իրողությունը, որ համայն հայությունը մեկ իրական հայրենիք ունի, անկախ այդ հայրենիքի քաղաքական կարգերից։ Ահա թե ինչու ուրիշ երկրներում մեծացած երկու հայ բանաստեղծները այնպես կրքոտ ու խորը երազում են Հայաստանի մասին։ Մուշեղ Իշխանը, որ երեսնական թվականներին գրեց տխրությամբ ու կարոտով համակված բանաստեղծություններ հայրենի տան մասին (մի ամբողջ շարք «Տուներու երգը» խորագրով), իր այս ծավալուն պոեմում գրեց՝

Հայաստան,
Անգին նշխար ու մասունք՝
Կուրծքին վրա անհայրենիք հայության,
Խաչի մը պես պահապան
Եվ խաչյալի տառապակոծ պաշտամունք...

Անդրանիկ Ծառուկյանի «Թուղթ առ Երևան» պոեմի անմիջական առիթը Գևորգ Աբովի բանաստեղծությունն էր Դաշնակցության դեմ։ Բայց պոեմն իր նշանակությամբ դուրս էր գալիս մի ամենևին ոչ առաջնակարգ բանաստեղծի ուղղված պատասխանի սահմաններից։ Դա ևս հայրենասիրության և հայրենակարոտի այնպիսի մի ապոթեոզ էր, որ շատ հարազատ էր դարեր շարունակ պանդխտության ցավով տառապած մի ժողովրդի ոգուն.

Միայն թե լինի, օ, լինի, լինի,
Մեր եղբայրների համար, քույրերի,
Մեր մանուկների ու մեր որբերի,
Եվ որպես շնորհ՝ մեր մեռելների
Շիրիմի համար, օ, լինի, լինի,
Պատառ մը շոր հող երկրում հայրենի...

Այսքան համեստ էին հայրենիքը կորցրած սփյուռքահայության բաղձանքները, և պատերազմը ցույց տվեց, որ այդ բաղձանքները իրականացել են... Ծառուկյանի «Թուղթը» եղավ իր ժամանակի սփյուռքահայ և ամբողջ հայ բանաստեղծության ամենասիրված, վեճերի ու խոսակցությունների տե-

ղիք տված գործերից մեկը, հայ մարդու ապրումների ու տագնապների մի հարազատ թարգմանությունը։

Այսպես արձագանքեց հայ գրականությունը համաշխարհային երկրորդ պատերազմին, որ ճշմարիտ հայրենական պատերազմ եղավ հայ ժողովրդի համար։

ОТЕЧЕСТВЕННАЯ ВОЙНА И ДУХОВНЫЕ ЦЕННОСТИ НАШЕГО НАРОДА

Доктор филол. наук А. К. ЕГИАЗАРЯН

Резюме

Вторая мировая война стала отечественной не только для русского, но и для всех народов СССР, в том числе и для армянского. Еще свежа была в памяти армян резня 1915 года, соучастником которой был и немецкий империализм. Турция и Германия имели тесные отношения и во второй мировой войне. Было известно также, что гитлеровские фашисты отнесли армянский народ к «неблагонадежным», так что в случае победы Германии Армению ожидала участь Западной Армении. В годы войны армянский народ пережил духовный подъем. Армянскими писателями—Аветиком Исаакяном, Дереником Демирчяном, Аршаком Чопаняном, Наири Заряном, Ованесом Ширазом и другими—были созданы произведения литературы и искусства, публицистики, вошедшие в золотой фонд армянской культуры. В них воспевались духовные ценности армянского народа—верность родному языку, родной земле, готовность к самопожертвованию во имя будущего, проблемы армянской государственности и т. д. Победное завершение войны оживило также литературу диаспоры, были созданы произведения, проникнутые любовью к Армении и верой в ее будущее. В борьбе с фашистской чумой армянский народ занял свое достойное место в рядах передового человечества.